Ծրագիր

«Բյուջեներ քաղաքացիների համար»

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ

Անվանում	Բյուջետային գիտելիքի փոխանակման էլեկտրոնային հարթակի պատրաստման ծառայության N S 3 ծածկագրով գնման մրցույթ
Ժամկետներ	14, փետրվար 2023թ. - 26, հոկտեմբեր 2023
Բյուջետային գիտելիքի փոխանակման էլեկտրոնային հարթակի պատրաստման ծառայության մատուցման վայր	ք. Երևան, Նալբանդյան 7, գրասենյակային տարածք 2

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Կազմակերպության մասին

«Իրավաբանների հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպությունը ստեղծվել է 1995թ.-ին: Իրավաբանների հայկական ասոցիացիայի ստեղծման հիմնական նպատակն էր համախմբել նոր սերնդի իրավաբանների ներուժը և աջակցել Հայաստանի կայացմանը, որպես անկախ, ժողովրդավարական, իրավական պետություն: Կազմակերպությունն իրականացնում է ժողովրդավարության, քաղաքացիական հասարակության, մարդու իրավունքների հակակոռուպցիոն և օրենքի գերակայության խթանմանն ու ուժեղացմանն ուղղված բազմաթիվ ծրագրեր: Կազմակերպության մասին մանրամասներին կարող եք ծանոթանալ կազմակերպության https://armla.am/ պաշտոնական կայքում:

Ծրագրի մասին

«Բյուջեներ քաղաքացիների համար» ծրագիրը իրականացվում է «Իրավաբանների հայկական ասոցիացիա» ՀԿ-ից (ղեկավար կազմակերպություն), «Տնտեսական զարգացման և հետազոտությունների կենտրոն» և «Ազորա Սենթրլ Յուրոփ» ՀԿ-ներից (համաիրականացնող կազմակերպություններ) բաղկացած կոնսորցիումի կողմից՝ Եվրոպական Միության կողմից տրված դրամաշնորհի շրջանակներում: Ծրագրի ընդհանուր նպատակն է՝ քաղաքացիական հասարակության մասնակցությամբ խթանել Հայաստանում ներառական և թափանցիկ բյուջետային գործընթացին: Ծրագրի առանձնահատուկ նպատակն է՝ նպաստել պետական բյուջետային գործընթացներին քաղաքացիական հասարակության ուժեղացված մասնակցությանը: «Բյուջեներ քաղաքացիների համար» ծրագիրը իրականացվում է Երևանում և ՀՀ մարզերում: Ծրագրի տևողությունը 4 տարի է:

Ծրագրի թիրախային խմբերն են.

- Առնվազն 40 ՔՀԿ-ներ (ՀԿ-ներ, ՀԿ-ների կոալիցիաներ/ցանցեր, հանրային քաղաքականության կենտրոններ, անկախ հետազոտական խմբեր, վերլուծական կենտրոններ, լրատվամիջոցներ և այլ ոչ առևտրային և ոչ պետական

կազմակերպություններ, որոնց հիմնական լիազորությունները ներառում է հանրային հաշվետվողականություն, հանրային քաղաքականության մասնակցություն, մշտադիտարկում և շահերի պաշտպանություն),

- Առնվազն 200 երիտասարդներ՝ հիմնականում ֆինանսների և տնտեսագիտության ոլորտներում մասնագիտացմամբ,
- 12 բյուջետային երիտասարդ մասնագետներ,
- մինչև 5 անկախ փորձագետների խումբ՝ բաղկացած հինգ փորձառու բյուջետային մասնագետներից,
- առնվազն 5 նախարարություն,
- ՀՀ ազգային ժողովի առնվազն 5 մշտական հանձնաժողովներ,
- ՀՀ հաշվեքննիչ պալատ:

Վերջնական շահառուներն են՝ ՀՀ ՔՀԿ-ները, ՀՀ կառավարությունը, ՀՀ ԱԺ մշտական հանձնաժողովները, ՀՀ բնակչությանը, մասնավորապես ծրագրի առաջնահերթ ոլորտների (արդարադատություն, կրթություն, սոցիալական ապահովություն և գյուղատնտեսություն) շահառուները:

Սույն գնման մրցույթի իրականացման հիմնարար սկզբունքներ

«Իրավաբանների հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպությունը սույն գնումը իրականացնելիս ղեկավարվում է հետևյալ հիմնարար սկզբունքներով.

1. «Խտրականության արգելքի սկզբունք»՝ բացառելով գնումների իրականացման գործընթացում ռասայական, գենդերային, կրոնական, ազգային (ազգության կանոնի պահպանում) կամ էթնիկական հիմքով որևէ խտրականության դրսևորում,
2. «Բաց և ազատ մրցակցության կանոնների պահպանման սկզբունք»՝ անաչառ, փաստաթղթավորման և մրցակցային գնումների իրականացում, զուրկ որևէ տեսակի առանձնահատուկ վերաբերմունքից ու շահերի բախումից,
3. «Լավագույն գին փողի դիմաց (լավագույն որակ/գին հարաբերակցությունը) սկզբունք»՝ գնումների գործընթացում հաղթողին որոշելու համար, կամ, as appropriate, նվազագույն գնի կիրառում,
4. «ԵՄ սանկցիոն ցուցակի կանոնի պահպանման սկզբունք»՝ բացառելով որևէ անձի որը ընդգրկված է ԵՄ սանկցիոն ցուցակում, գնումների գործընթացին մասնակցությունը,
5. «Ծագման կանոնի (Rule of origin) պահպանման սկզբունք»:

2. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ

Էլեկտրոնային հարթակի պատրաստման ծառայության գնման հիմնական նպատակն է «Բյուջեներ քաղաքացիների համար» ծրագրի շրջանակներում պատրաստել և գործարկել Բյուջետային գիտելիքի փոխանակման էլեկտրոնային հարթակը:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ ՈՒ ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Նկարագրություն

Սույն տեխնիկական առաջադրանքի շրջանակներում ստեղծվելու է Բյուջետային գիտելիքի փոխանակման էլեկտրոնային հարթակը: Այն պետք է լինի երկլեզու (հայերեն, անգլերեն) և տեղադրվելու է պատվիրատուի կողմից նշված էլեկտրոնային հասցեում:

Բյուջետային գիտելիքի փոխանակման էլեկտրոնային հարթակը պետք է բաղկացած լինի հետևյալ բաղադրիչներից.

- **Հարթակի տեղեկատվական կլաստեր**.
  Այն մատչելի, հասանելի բյուջետային տեղեկատվություն (այդ թվում սույն գործողության (ծրագրի) շրջանակներում պատրաստված Տեղեկություն քաղաքացու համար, Քաղաքացու բյուջեները, ՀՏՀ-երը, ոլորտային պարզեցված բյուջեները, բյուջեների վերլուծությունները, ուղեցույցները, ԵՄ երկիր Չեխիայի բյուջետավորման փորձը, մշտադիտարկման և ՇՊ իրականացման արդյունքները, փաստարկված առաջարկությունները և հանրային քաղաքականությունների փոփոխությունները, Կառավարություն - ՔՀԿ-ներ, ԱԺ-ՔՀԿ-ներ հանրային քննարկումները, ինֆոգրաֆիկաներ ներառող վիդիոնյութերը, գործողության շրջանակներում իրականացված աշխատանքների և կազմակերպված միջոցառումների լուսաբանումները և այլն) կպարունակի ՔՀԿ-ների, ԶԼՄ-ների, երիտասարդ փորձագետների և քաղաքացիների համար:

- **Հարթակի ուսումնական կլաստեր.**
  Այն բաղկացած կլինի ՔՀԿ-ների և երիտասարդ մասնագետների բյուջետային ուսուցման առցանց և առկա մոդուլներից, Քաղաքացու պարզեցված ուսուցման մոդուլներից և դրանից բխող այլ անհրաժեշտ տեղեկատվությունից:

Հիմնական առաջադրանքները

Համագործակցելով ծրագրի աշխատակազմի, միջազգային և տեղական փորձագետների հետ՝ Բյուջետային գիտելիքի փոխանակման էլեկտրոնային հարթակի պատրաստման ծառայությունների մատուցման շրջանակներում պետք է իրականացվեն հետևյալ առաջադրանքները.

Բյուջետային գիտելիքի փոխանակման էլեկտրոնային հարթակը, որ բաղկացած կլինի տեղեկատվական և ուսումնական կլաստերներից:

<u>Ա/ Տեղեկատվական կլաստերի կառուցվածք.</u>

Բյուջետային գիտելիքի փոխանակման էլեկտրոնային հարթակի տեղեկատվական կլաստերը պետք է բաղկացած լինի հետևյալ կառուցվածքից.

1. **Գլխավոր**
2. **Հարթակի մասին**
   - ՀՏՀ

3. **Նորություններ**
    a. Լուրեր
    b. Մամլո հաղորդագրություններ
    c. Տեսանյութեր
    d. Լուսանկարներ
    e. ՁԼՄ-ները մեր մասին
4. **Ռեսուրսներ**
    a. Մասնագիտական նյութեր
        - Բյուջետային
        - ՇՊ
        - Այլ կարողություններ
    b. Տեղեկություն քաղաքացու համար
        - Բյուջետային
        - ՇՊ
        - Այլ կարողություններ
    c. ԵՄ փորձ
        - Բյուջետային
        - ՇՊ
    d. Պարզեցված բյուջեներ
        - Արդարադատություն
            - Ենթաոլորտներ ստեղծելու հնարավորությամբ
        - Կրթություն
            - Ենթաոլորտներ ստեղծելու հնարավորությամբ
        - Սոցիալական աջակցություն
            - Ենթաոլորտներ ստեղծելու հնարավորությամբ
        - Գյուղատնտեսություն
            - Ենթաոլորտներ ստեղծելու հնարավորությամբ

e. Քաղաքացու բյուջե
    - Արդարադատություն
        - Ենթաոլորտներ ստեղծելու հնարավորությամբ
    - Կրթություն
        - Ենթաոլորտներ ստեղծելու հնարավորությամբ
    - Սոցիալական աջակցություն
        - Ենթաոլորտներ ստեղծելու հնարավորությամբ
    - Գյուղատնտեսություն
        - Ենթաոլորտներ ստեղծելու հնարավորությամբ
f. Հաջողության պատմություններ
g. Հայտարարություններ
h. Այլ նյութեր

5. Իրադարձություններ

a. Քննարկումներ
    - Կառավարություն
    - ԱԺ
    - Այլ
b. Սեմինարներ
c. Համաժողով
d. Այլ միջոցառումներ

6. Դրամաշնորհներ

a. Բաղադրիչի մասին
b. Փոքր դրամաշնորհներ
    - Դրամաշնորհառուներ
        - Ծրագիր
        - Հաշվետվություն
        - Զեկույց

7. **Ուսումնական կլաստեր** /Կառուցվածքը տրվում է առանձին/
8. **Կապ**
9. **Հայերեն/անգլերեն**
10. **Հարթակի քարտեզ**
11. **ՀՏՀ**

1. Գլխավոր էջ.

Վերևի հատված.

Հարթակի խորհրդանիշ	Բյուջետային գիտելիքի փոխանակման էլեկտրոնային հարթակ	Հարթակի քարտեզի նշան	Հայերեն/անգլերեն

Նույն գծի վրա կամ մի փոքր ներքև.

Մեր մասին	Նորություններ	Ռեսուրսներ	Իրադարձություններ	Դրամաշնորհներ	Ուսումնական կլաստեր	Կապ

Այնուհետև դեպի ներքև՝

Թարթող չորս մեծ սլայդներ

Առաջին մեծ սլայդը լինի Տեղեկություն քաղաքացու համար, որի հողումը կտանի դեպի Հարթակի ռեսուրսներ բաժնի Տեղեկություն քաղաքացու համար ենթաբաժինը:

Այնուհետև դեպի ներքև՝

Հարթակի ամբողջ երկայնքով 1.5-2 մ լայնքով բաներ՝ հարթակի ուսումնական կլաստերի վերաբերյալ:

Այնուհետև դեպի ներքև՝

Տեղեկություն քաղաքացու համար՝ մեկ շարքի վրա երեք հավասարաչափ լուսանկարի և դրանցից յուրաքանչյուրի տակ գրվելիք նյութի վերնագրի հնարավորությամբ, որը հողումը կտանի Հարթակի ռեսուրսների բաժնի Տեղեկություն քաղաքացու համար ենթաբաժնի բյուջետային, ՇՊ և այլ նյութեր վերնագրերով հատվածներ (փոստեր):

Այնուհետև դեպի ներքև՝

Քաղաքացու բյուջե՝ մեկ շարքի վրա՝ աջ կողմում մեկ շարքով երկու հավասարաչափ լուսանկարների և դրանցից յուրաքանչյուրի տակ կամ վրա գրվելիք նյութի վերնագրի հնարավորությամբ, (ընդամենը երկու նյութ) և ձախ կողմում մեկ շարքով երկուական հավասարաչափ լուսանկարների և դրանցից յուրաքանչյուրի տակ կամ վրա գրվելիք նյութի վերնագրի հնարավորությամբ, (ընդամենը երկու նյութ)՝ պահպանելով ձախ կողմի լուսանկարների հետ համաչափությունը, որի հղում կտանի Հարթակի ռեսուրսների բաժնի Քաղաքացու բյուջե ենթաբաժնի արդարադատության, կրթության, սոցիալական աջակցության և գյուղատնտեսության վերնագրերով հատվածներ (փոստեր):

Այնուհետև դեպի ներքև՝

Պարզեցված բյուջե՝ մեկ շարքի վրա՝ աջ կողմում մեկ մեծ լուսանկար, դրա տակ գրվելիք պարզեցված բյուջեի վերնագրի հնարավորությամբ և ձախ կողմում իրար կողք երեք հավասարաչափ լուսանկարներ և դրանցից յուրաքանչյուրի տակ գրվելիք պարզեցված բյուջեի վերնագրերի հնարավորությամբ՝ պահպանելով ձախ կողմի լուսանկարի հետ համաչափությունը, որի հղում կտանի Հարթակի ռեսուրսների բաժնի Պարզեցված բյուջեներ ենթաբաժնի արդարադատության, կրթության, սոցիալական աջակցության և գյուղատնտեսության վերնագրերով հատվածներ (փոստեր):

Այնուհետև դեպի ներքև՝

Լուրեր՝ մեկ շարքի վրա երեք հավասարաչափ լուսանկարի և դրանցից յուրաքանչյուրի տակ գրվելիք լուրի վերնագրի հնարավորությամբ, որի հղում կտանի Հարթակի նորություններ բաժնի լուրեր ենթաբաժին:

Այնուհետև դեպի ներքև՝

Լուսանկարներ և տեսանյութեր՝ մեկ շարքի վրա՝ աջ կողմում երկու շարքով երեքական հավասարաչափ լուսանկարների (ընդամենը վեց լուսանկար) և ձախ կողմում երկու շարքով երկուական հավասարաչափ տեսանյութեր (ընդամենը չորս տեսանյութ)՝ պահպանելով ձախ կողմի լուսանկարների հետ համաչափությունը որի հղում կտանի Հարթակի նորություններ բաժնի լուսանկարներ և տեսանյութեր ենթաբաժինների:

Ներքևի հատված.

Մեր մասին ՀՏՀ Նորություններ Ռեսուրսներ Իրադարձություններ Դրամաշնորհներ Ուսումնական կլաստեր Հետադարձ կապ	Հետադարձ կապ Հասցե՝ ---------- Հեռախոսահամար՝ ---------- Էլ. փոստի հասցե՝ ----------	Հարթակի սոցիալական էջերի հղումներ	Հարթակի ներսում որոնման հնարավորություն	Դեպի Գլխավոր էջի վերևի հատված տանող կոճակ՝ սլաքով

Ամենաներքևի հատված.

Օգտագործման պայմաններ	Գաղտնիության քաղաքականություն	Disclaimer/Վերապահում Բյուջետային գիտելիքի փոխանակման էլեկտրոնային հարթակը պատրաստվել է Եվրոպական միության աջակցությամբ իրականացվող «Բյուջեներ քաղաքացիների համար» ծրագրի կողմից: Հարթակի բովանդակության համար պատասխանատու է ծրագիրը և այն որևէ կերպ չի արտահայտում Եվրոպական միության պաշտոնական տեսակետը (Հարթակի պաշտոնական գործարկումից առաջ վերապահման վերջնական տեքստը կհաստատվի ԵՄՊ տեսանելիության կանոններին համապատասխան):

<u>Բ/ Ուսումնական կլաստերի կառուցվածք.</u>

Բյուջետային գիտելիքի փոխանակման էլեկտրոնային հարթակի ուսումնական կլաստերը պետք է հանդիսանա հարթակի բաղկացուցիչ մասը (հասցեն պետք է լինի elearning բառով փոխկապակցված հարթակի էլեկտրոնային հասցեին) և պետք է բաղկացած լինի հետևյալ կառուցվածքից.

1. **Հիմնական**
2. **Հարթակի մասին**
3. **Առցանց ուսուցում**
    a. **ՔՀԿ-երի հիմնական ուսուցում**

    Ուսումնական մոդուլներ.

    1. *Բյուջետային*
    2. *ՇՊ*
    3. *Այլ կարողություններ*
    4. *ԵՄ փորձ*

    Յուրաքանչյուր ուսումնական մոդուլի ուսումնական թեմա կպարունակի.

    1. *Տեսանյութ*
    2. *Գրավոր նյութ*

3. *Ներկայացում (պրեզենտացիա)*
4. *Լրացուցիչ նյութեր*
5. *Ստուգողական հարցաշար-քուիզ*

b. **Երիտասարդ մասնագետների հիմնական ուսուցում**
Ուսումնական մոդուլներ.
1. *Բյուջետային*
2. *ՇՊ*
3. *Այլ կարողություններ*
4. *ԵՄ փորձ*

Յուրաքանչյուր ուսումնական մոդուլի ուսումնական թեմա կպարունակի.
1. *Տեսանյութ*
2. *Գրավոր նյութ*
3. *Ներկայացում* (պրեզենտացիա)
4. *Լրացուցիչ նյութեր*
5. *Ստուգողական հարցաշար-քուիզ*

c. **Քաղաքացիների պարզեցված ուսուցում**
Ուսումնական մոդուլներ.
1. *Բյուջետային*
2. *ՇՊ*

4. **Առկա ուսուցում**
a. **ՔՀԿ-երի հիմնական ուսուցում**
Ուսումնական մոդուլներ.
5. *Բյուջետային*
6. *ՇՊ*
7. *Այլ կարողություններ*
8. *ԵՄ փորձ*

Յուրաքանչյուր ուսումնական մոդուլի ուսումնական թեմա կպարունակի.
1. *Գրավոր նյութ*
2. *Ներկայացում (պրեզենտացիա)*
3. *Լրացուցիչ նյութեր*
4. *Ստուգողական հարցաշար-քուիզ*

b. **Երիտասարդ մասնագետների հիմնական ուսուցում**
Ուսումնական մոդուլներ.
1. *Բյուջետային*
2. *ՇՊ*
3. *Այլ կարողություններ*
4. *ԵՄ փորձ*

Յուրաքանչյուր ուսումնական մոդուլի ուսումնական թեմա կպարունակի.
1. *Գրավոր նյութ*
2. *Ներկայացում (պրեզենտացիա)*

3. *Լրացուցիչ նյութեր*
4. *Ստուգողական հարցաշար-քուիզ*

5. **Չեխիա վիտուալ ուսումնական այց**
    1. *Տեսանյութ*
    2. *Ներկայացում (պրեզենտացիա)*
    3. *Լրացուցիչ նյութեր*
    4. *Ստուգողական հարցաշար-քուիզ*

6. **Մասնակիցներ**
    1. *Իմ անձնական էջ (մասնակցի անուն ազգանուն, ուսումնական հաստատության/աշխատանքի վայրի/ ՔՀԿ-ի անվանում, լուսանկար)*
    2. *Ստուգողական հարցաշար-քուիզ լրացում*
    3. *Իմ ուսուցումները*
    4. *Ուսուցման մեկնարկի և ավարտի ժամկետներ*
    5. *Ստանալ ավարտական վկայականը*

7. **ՀՏՀ**

8. **Շրջանավարտներ**

Շրջանավարտի անուն ազգանուն, ուսումնական հաստատության/աշխատանքի/ՔՀԿ-ի վայրի անվանում, լուսանկար, Հիմնական ուսուցման ուսուցման մեկնարկի և ավարտի ժամկետներ, Խորացված ուսուցման մեկնարկի և ավարտի ժամկետներ

Հիմնական էջ.

Վերևի հատված.

Հարթակի խորհրդանիշ	Բյուջետային գիտելիքի փոխանակման էլեկտրոնային ուսուցման հարթակ	Հարթակի քարտեզի նշան	Հայերեն/անգլերեն

Նույն գծի վրա կամ մի փոքր ներքև.

Հարթակի մասին	Առցանց ուսուցում	Առկա ուսուցում	Չեխիա վիրտուալ ուսումնական այց	Մասնակիցներ	Շրջանավարտներ	ՀՏՀ

Ուսումնական հարթակի առցանց ուսուցում, առկա ուսուցում, Չեխիա վիրտուալ այց, մասնակիցներ բաժինների մուտքը կապահովվի գաղտնաբառի մուտքի միջոցով:

Ներքևի հատված.

Մեր մասին ՀՏՀ Նորություններ Ռեսուրսներ Իրադարձություններ Դրամաշնորհներ Ուսումնական կլաստեր Հետադարձ կապ	Հետադարձ կապ Հասցե՝ ---------- Հեռախոսահամար՝ ---------- Էլ. փոստի հասցե՝ ----------	Հարթակի սոցիալական էջերի հղումներ	Հարթակի ներսում որոնման հնարավորություն	Դեպի Գլխավոր էջի վերևի հատված տանող կոճակ՝ սլաքով

Ամենաներքևի հատված.

Օգտագործման պայմաններ	Գաղտնիության քաղաքականություն	Disclaimer/Վերապահում Բյուջետային գիտելիքի փոխանակման էլեկտրոնային հարթակը պատրաստվել է Եվրոպական միության աջակցությամբ իրականացվող «Բյուջեներ քաղաքացիների համար» ծրագրի կողմից: Հարթակի բովանդակության համար պատասխանատու է ծրագիրը և այն որևէ կերպ չի արտահայտում Եվրոպական միության պաշտոնական տեսակետը (Հարթակի պաշտոնական գործարկումից առաջ վերապահման վերջնական տեքստը կհաստատվի ԵՄՊ տեսանելիության կանոններին համապատասխան):

Ակնկալվող հիմնական արդյունքները.

1. Պատրաստվել, փորձարկվել և գործարկվում է Բյուջետային գիտելիքի փոխանակման էլեկտրոնային հարթակը,
2. Հարթակի տեղեկատվական կլաստերը գործում է: Այն մատչելի, հասանելի բյուջետային տեղեկատվություն (այդ թվում սույն գործողության (ծրագրի) շրջանակներում պատրաստված Տեղեկություն քաղաքացու համար, Քաղաքացու բյուջեները, ՀՏՀ-երը, ոլորտային պարզեցված բյուջեները, բյուջեների վերլուծությունները, ուղեցույցները, ԵՄ երկիր Չեխիայի բյուջետավորման փորձը, մշտադիտարկման և ՇՊ իրականացման արդյունքները, փաստարկված առաջարկությունները և հանրային քաղաքականությունների փոփոխությունները, Կառավարություն - ՔՀԿ-ներ, ԱԺ-ՔՀԿ-ներ հանրային քննարկումները, ինֆոգրաֆիկաներ ներառող վիդիոնյութերը, գործողության շրջանակներում իրականացված աշխատանքների և կազմակերպված միջոցառումների լուսաբանումները և այլն) է պարունակում ՔՀԿ-ների, ԶԼՄ-ների, երիտասարդ փորձագետների և քաղաքացիների համար:
3. Հարթակի ուսումնական կլաստերը գործում է: Այն բաղկացած է ՔՀԿ-ների և երիտասարդ մասնագետների բյուջետային ուսուցման առցանց և առկա մոդուլներից, ինչպես նաև քաղաքացիների պարզեցված ուսուցման մոդուլներից և դրանից բխող

այլ անհրաժեշտ տեղեկատվությունից, որոնք ծառայում են ՔՀԿ-ների և երիտասարդ մասնագետների բյուջետային ոլորտի կարողությունների զարգացման համար:

4. ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Բյուջետային գիտելիքի փոխանակման էլեկտրոնային հարթակը պետք է բաղկացած լինի տեղեկատվական և ուսումնական կլաստերներից:

Հարթակը իր ոճով և կառուցվածքով լինելու է պարզ և հասանելի բոլոր օգտատերերի համար: Հարթակը ունենալու է Responsive Design, այսինքն ամբողջական ինֆորմացիան հասանելի է լինելու: Սմարթֆոնով կայք մուտք գործելու դեպքում կայքի տեսքը հարկավոր է, որ լինի օպտիմալացված և առավել հարմարավետ օգտատերերի համար:

Հարթակի պատրաստման համար պետք է օգտագործվեն ժամանակակից ծրագրային լուծումներ /HTML5, CSS3, PHP (Yii2 կամ Code Igniter 4 ֆրեյմվորկների վրա հիմնված), MySQL և այլն/, որոնք արդիական տեսք ու օգտագործման հեշտ միջոցներ կապահովեն ինչպես այցելուներին, այնպես էլ կայքի ադմինիստրատորներին:

Հարթակի ձևավորումը պետք է լինի այնպիսին, որ միաձև դիտվի ցանկացած ժամանակակից մոնիտորների վրա:

Հարթակը պետք է լինի օպտիմալացված՝ որոնողական համակարգերի հետ աշխատելու համար, ինչի համար բոլոր էջերը պետք է հագեցած լինեն համապատասխան թեգերով և մետա-թեգերով /tags, meta-tags/, գեներացված լինի XML-sitemap և իրականացված լինեն որոնողական օպտիմալացման այլ միջոցներ:

Հարթակի ադմինիստրատիվ մասը պետք է ապահովված լինի անվտանգության HTTPS պրոտոկոլով:

Ադմինիստրատիվ մասը պետք է հագեցած լինի լիարժեք քանակությամբ գործիքներով, որոնք հնարավորություն կտան պատվիրատուին կառավարել բովանդակությունը՝ տեքստային, գունային, չափսային փոփոխություն, աղյուսակների, նկարների և տեսահոլովակների ներմուծում, բովանդակության հավասարեցում, հղումների կցում և այլ մատչելի գործիքներ, ինչպես նաև պատվիրատուի կողմից պարզ և մատչելի կերպով փոփոխություններ և նոր էջեր, փոստեր, պատուհաններ ստեղծելու/ավելացնելու հնարավորության առկայություն: Ինչպես նաև պետք է ունենա էջերի կոդային փոփոխության տիրույթ /HTML source code editing/:

Ադմինիստրատիվ բաժնում պետք է հնարավորություն լինի էջերը կամ ֆայլերը դասակարգել ըստ այբբենական կարգի, ըստ ֆայլի չափսի կամ ըստ ֆայլը բացելու/փոփոխելու ժամանակացույցի:

Ադմինիստրատիվ մասում պետք է լինի մուտքային անվան և գաղտնաբառի փոփոխության հնարավորություն, օգտատեր ավելացնել/հեռացնելու և ադմինիստրատիվ տիրույթում նրանց տարբեր մակարդակների իրավունքներ տալու հնարավորություն:

Հարթակի ցանկացած մակարդակում պետք է հնարավորություն լինի ավելացնել/պակասեցնել ցանկացած տիպի և քանակության էջ: Էջ ջնջել, խմբագրել կամ թաքցնել:

Բոլոր էջերում տեղադրվող տեղեկատվությունը պետք է դասավորված լինի ըստ տեղադրման, կամ նշված ամսաթվի ժամանակացույցի /նորից - հին/, վերևի մասում լինի տեղեկատվության ամսաթիվը:

Հարթակի բովանդակային մասը, այդ թվում ուսումնական, տեղեկատվական նյութերը, հիմնական նկարներն ու տեսահոլովակները տրամադրում է պատվիրատուն՝ էլեկտրոնային տարբերակով: Տեսահոլովակները պետք է հնարավորություն լինի դիտելու անմիջապես կայքից և կարող են տեղադրված լինել ինչպես կայքի տիրույթում, այնպես էլ Youtube –ում Պատվիրատուի պաշտոնական էջում:

Բոլոր գրաֆիկական էլեմենտները պետք է լինեն եզակի, ստեղծված կատարողի կողմից այս նախագծի համար կամ տրամադրված պատվիրատուի կողմից: Ինտերնետում ազատ տարածվող գրաֆիկական ֆայլեր օգտագործել չի թույլատրվում:

Հարթակը պետք է լիարժեք աշխատի առնվազն Google Chrome, Firefox, Microsoft Edge, Safari արդիական բրաուզերներում:

Հարթակը հանձնելուց կատարողը պետք է կատարի բոլոր կարգավորումները, ինչպես նաև՝ պատվիրատուին տրամադրի հարթակի ամբողջական ֆայլային համակարգը, բազաները, դրանց հետ կապված գաղտնաբառերը:

Հարթակի առցանց ուսուցման յուրաքանչյուր թեման բաղկացած կլինի տեսանյութից, ինֆոգրաֆիկաներ ընդգրկող գրավոր տեքստային նյութից, պրեզենտացիայից, տվյալ թեմայի վերաբերյալ առցանց այլ նյութերի հղումներից և թեմայի վերաբերյալ գիտելիքները ստուգող հարցաշարից: Յուրաքանչյուր թեմայի վերաբերյալ հարցաշարի հարցերի ութսուն և ավել տոկոսը պատասխանելու դեպքում ուսուցման հարթակը հնարավորություն կտա ավտոմատ կերպով անցում կատարել հաջորդ թեմային: Առցանց ուսուցման բոլորը թեմաները հաջողությամբ ավարտելուց հետո առցանց հարթակը հնարավորության կտա համակարգից ներբեռնել և տպագրել առցանց ուսուցման ավարտական վկայականը:

5. ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

Այն իրավաբանական կամ ֆիզիկական անձը (անհատ ձեռնարկատերը) կընտրվի որպես Բյուջետային գիտելիքի փոխանակման էլեկտրոնային հարթակի պատրաստման ծառայություն մատուցող, որը սահմանված ժամկետներում կներկայացնի ընտրությանը մասնակցելու ամբողջական հայտ:

Ընտրության չափանիշները ներառում են՝

- Ներկայացված հայտի համապատասխանությունը՝ սույն տեխնիկական առաջադրանքին,
- Առաջարկվող մեթոդաբանության որակն ու նորարությունը,
- Հայտատուի որակավորումը, այդ թվում նմանատիպ ծառայությունների մատուցման նախկին փորձառությունը (առնվազն 5 տարվա փորձառություն) և նմանատիպ աշխատանքների կատարման առնվազն 1 օրինակ,
- Առաջարկվող աշխատանքային պլանի և ժամանակացույցի իրատեսական լինելը:,
- Գնային առաջարկի արդյունավետությունը:

6. ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆ ԵՎ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

«Իրավաբանների հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպությունը նախատեսում է Բյուջետային գիտելիքի փոխանակման էլեկտրոնային հարթակի պատրաստման ծառայություն մատուցողին ընտրել մինչև 2023թ.-ի փետրվարի 14-ը: Ընտրված անձը պետք է ի վիճակի լինի ծառայությունների մատուցումը սկսել 2023թ.-ի փետրվարի 15-ից:
Բյուջետային գիտելիքի փոխանակման էլեկտրոնային հարթակի հայերեն տարբերակի նախագիծը, որը պատրաստ է շահագործման, պատվիրատուին պետք է ներկայացվի ոչ ուշ, քան մինչև 2023թ.-ի մայիսի 31-ը:
Բյուջետային գիտելիքի փոխանակման էլեկտրոնային հարթակի հայերեն տարբերակի նախագիծը պատվիրատուին պետք է բանավոր ներկայացվի և քննարկումը պետք է անցկացվի ոչ ուշ, քան մինչև 2023թ.-ի հունիսի 15-ը:
Բյուջետային գիտելիքի փոխանակման էլեկտրոնային հարթակի հայերեն տարբերակի վերջնական տարբերակը, որը պատրաստ է շահագործման, պատվիրատուին պետք է հանձնվի ոչ ուշ, քան մինչև 2023թ.-ի հուլիսի 26-ը:
Բյուջետային գիտելիքի փոխանակման էլեկտրոնային հարթակի անգլերեն տարբերակի նախագիծը, որը պատրաստ է շահագործման, պատվիրատուին պետք է ներկայացվի ոչ ուշ, քան մինչև 2023թ.-ի սեպտեմբերի 15-ը:
Բյուջետային գիտելիքի փոխանակման էլեկտրոնային հարթակի անգլերեն տարբերակի նախագիծը պատվիրատուին պետք է բանավոր ներկայացվի և քննարկումը պետք է անցկացվի ոչ ուշ, քան մինչև 2023թ.-ի սեպտեմբերի 28-ը:
Բյուջետային գիտելիքի փոխանակման էլեկտրոնային հարթակի անգլերեն տարբերակի վերջնական տարբերակը, որը պատրաստ է շահագործման, պատվիրատուին պետք է հանձնվի ոչ ուշ, քան մինչև 2023թ.-ի հոկտեմբերի 26-ը:

7. ՀԱՅՏԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԱՐԳԸ

Բյուջետային գիտելիքի փոխանակման էլեկտրոնային հարթակի պատրաստման ծառայության գնման մրցույթի իրականացման նպատակով «Իրավաբանների հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպության https://armla.am/ պաշտոնական վեբ կայքում հրապարակվում է գնման մրցույթի հայտարարություն: Հայտարարությունը հրապարակվում է հայտերի ընդունման վերջնաժամկետը լրանալու օրվանից՝ 13.02.2023թ., առնվազն տաս օր առաջ:

Հայտերի ներկայացման կարգը

Հետաքրքրված անձինք կարող են մինչև 2023 թվականի փետրվար 13-ը, ժամը՝ 18.00-ը ներառյալ, հայտը (կից փաստաթղթերով հանդերձ), հայտարարությունը, ինքնակենսագրականը (CV) կամ իրավաբանական անձի դեպքում հիմնական մասնագետների ինքնակենսագրականները (CV-ները) ուղարկել հետևյալ էլեկտրոնային փոստին՝ info@armla.am, նամակի թեմայի տողում նշելով՝ Բյուջետային գիտելիքի փոխանակման էլեկտրոնային հարթակի պատրաստման ծառայության գնման մրցույթի հայտ» կամ հայտը (կից փաստաթղթերով հանդերձ), հայտարարությունը, ինքնակենսագրականը (CV) կամ իրավաբանական անձի դեպքում հիմնական մասնագետների ինքնակենսագրականները (CV-ները) ներկայացնել Երևան, Նալբանդյան 7, գրասենյակային տարածք հասցեում գտնվող «Իրավաբանների հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպություն փակ ծրարով (ծրարը ստորագրված և/կամ կնիքված) ներկայացնել հայտը Խնդրում ենք ծրարի վրա նշել Բյուջետային գիտելիքի փոխանակման էլեկտրոնային հարթակի պատրաստման ծառայության գնման մրցույթի հայտ»: Անհրաժեշտության դեպքում, մրցութային հանձնաժողովը հայտ ներկայացրած անձից կարող է պահանջել հավելյալ տեղեկություններ և փաստաթղթեր:

Հայտերը գնման մրցութային հանձնաժողովի կողմից կբացվեն 2023 թվականի փետրվարի 14-ին, ժամը՝ 12.00-ին:

Մրցույթին կարող են դիմել և՛ ֆիզիկական, և՛ իրավաբանական անձինք (այդ թվում անհատ ձեռնարկատերերը):

Մրցույթում հաղթած անձի հետ Պատվիրատուն կկնքի ծառայությունների վճարովի մատուցման պայմանագիր:

Այն անձը կմասնակցի որպես Բյուջետային գիտելիքի փոխանակման էլեկտրոնային հարթակի պատրաստման ծառայության գնման մրցույթին, որը սահմանված ժամկետներում կներկայացնի գնահատման ծառայության գնման մրցույթին մասնակցելու ամբողջական հայտ:

Գնահատման փուլերը

Մրցույթի գնահատման փուլերն են.

1. **Վարչական համապատասխանության գնահատման փուլը.**

Գնահատման այս փուլում հայտերի ստացնում է էլեկտրոնային կամ առձեռն եղանակով և դրանց ստացման վերաբերյալ ստացականի ուղարկումը կամ տրամադրումը:

Գնահատման այս փուլում գնահատման չափորոշիչը ներկայացված հայտի համապատասխանությունն է սույն մրցույթի տեխնիկական առաջադրանքին:

Գնման մրցութային հանձնաժողովի կողմից վարչական համապատասխանության գնահատման փուլում մրցույթին մասնակից անձի կողմից ներկայացված հայտը սույն տեխնիկական առաջադրանքին և մրցույթի մյուս պայմաններին համապատասխանելու դեպքում, տվյալ հայտը անցնում է գնման մրցույթի տեխնիկական և գնահատման փուլեր:

Պայմանագրի կատարման վրա ազդող ցանկացած հիմնական ֆորմալ սխալ կամ լուրջ սահմանափակում կամ մրցակցության խեղաթյուրումը հանգեցնում է համապատասխան հայտի մերժմանը: Մրցութային հանձնաժողովը այս փուլում նաև պետք է ստուգի ազգության կանոնի պահպանումը:

2. **Տեխնիկական գնահատման փուլը.**

Տեխնիկական գնահատման փուլում մրցութային հանձնաժողովը ուսումնասիրում է հայտերի տեխնիկական առաջարկները: Հայտերի տեխնիկական առաջարկը գնահատելիս հանձնաժողովի յուրաքանչյուր անդամ յուրաքանչյուր հայտի տեխնիկական առաջարկին տալիս է տեխնիկական գնահատական առավելագույնը 100 միավորից՝ համաձայն ստորև բերված տեխնիկական գնահատման չափորոշիչների և գնահատման միավորների աղյուսակի:

Տեխնիկական գնահատման չափորոշիչների և գնահատման միավորների աղյուսակ.

Տեխնիկական գնահատման չափորոշիչ	Գնահատման միավոր
Առաջարկվող մեթոդաբանության որակն ու նորարարությունը:	Առավելագույնը 25 միավոր
Նախկին փորձառությունը՝ նմանատիպ ծառայությունների մատուցման ոլորտում և նմանատիպ	

աշխատանքների կատարման առնվազն 1 օրինակ:	Առավելագույնը 50 միավոր
Առաջարկվող աշխատանքային պլանի և ժամանկացույցի և իրատեսական լինելը:	Առավելագույնը 25 միավոր
Ընդհանուր՝	Առավելագույնը 100 միավոր

Մրցույթի մասնակիցները պետք է ներկայացնեն փաստաթղթային ապացույցներ առաջարկվող գնահատողի կամ հիմնական գնահատողների համար: Սա ներառում է CV-ում նշված դիպլոմների պատճենները և գործատուի վկայականները կամ տեղեկանքները, որոնք հաստատում են CV-ում նշված մասնագիտական փորձը: Հաշվի կառնվեն միայն փաստաթղթային ապացույցներով հաստատված դիպլոմները և փորձը:

Երբ մրցութային հանձնաժողովը սահմանում է յուրաքանչյուր հայտի տեխնիկական առաջարկի միջին տեխնիկական միավորը (յուրաքանչյուր քվեարկող անդամի կողմից տրված տեխնիկական միավորների մաթեմատիկական միջինը), 75 միավորի շեմից ցածր ստացած տեխնիկական առաջարկի հետևանքով տվյալ հայտը ավտոմատ կերպով մերժվում է: Եթե ոչ մի հայտի տեխնիկական առաջարկ չի հավաքում 75/100 միավոր և ավելի, ապա սույն մրցույթը չեղյալ է հայտարարվում:

«Տեխնիկապես ընդունված» են հայտարարվում միայն այն հայտերը, որոնց տեխնիկական առաջարկները ստանում են 100 միավորից առնվազ 75 կամ ավելի միջին տեխնիկական միավոր:

Մրցույթի տեխնիկական գնահատման ամփոփագրի նմուշ.

	Առավելագույն հնարավոր միավորը	**Հայտ 1**	**Հայտ 2**	**Հայտ 3**
Գնահատող Ա Տեխնիկական միավոր	100	55	88	84
Գնահատող Բ Տեխնիկական միավոր	100	60	84	82
Գնահատող Գ Տեխնիկական միավոր	100	59	82	90
Ընդամենը	300	174	254	256
Միջին տեխնիկական միավոր (մաթեմատիկական միջին)		174/3 = 58.00	254/3 = 84.67*	256/3 = 85.33*
Կշռված տեխնիկական միավորը (դիտարկվող հայտի միջին տեխնիկական միավորը / լավագույն		Հայտը մերժվել է**	84.67/85.33 x 100 = 99.22	85.33/85.33 x 100

տեխնիկական հայտի միջին տեխնիկական միավորը x 100)				=100.00

* Հաշիվը տասնորդական կետից հետո կլորացվում է երկու նիշի:

** Ֆինանսական գնահատման փուլ են անցնում միայն առնվազն 75 միավոր միջին տեխնիկական միավոր ստացած հայտերը:

3. Ֆինանսական գնահատման փուլը:

Ֆինանսական գնահատման փուլում գնահատվում են միայն առնվազն 75 միավոր միջին տեխնիկական միավոր ստացած հայտերը: Այս փուլում պայմանագրի համար հատկացված առավելագույն բյուջեն գերազանցող հայտերը համարվում են անընդունելի և մերժվում են:

Այնուհետև մրցութային հանձնաժողովն այնուհետև անցնում է տարբեր հայտերի գնային առաջարկների ֆինանսական համեմատությանը ըստ ստորև բերված ֆինանսական գնահատման չափորոշիչի և գնահատման միավորի աղյուսակի.

Ֆինանսական գնահատման չափորոշիչի և գնահատման միավորի աղյուսակ.

Ֆինանսական գնահատման չափորոշիչ	Գնահատման միավոր
Ֆինանսական գնահատում. • Գնային առաջարկի արդյունավետությունը:	Առավելագույնը 100 միավոր
Ընդհանուր՝	Առավելագույնը 100 միավոր

Ամենացածր գնային առաջարկ ունեցող հայտը ստանում է 100 միավոր: Մյուս հայտերին միավորներ են շնորհվում հետևյալ բանաձևով.

Ֆինանսական միավոր = (նվազագույն գնային առաջարկ/դիտարկվող հայտի գնային առաջարկ x 100):

Մրցույթի ֆինանսական գնահատման ամփոփագրի նմուշ.

	Առավելագույն հնարավոր միավորը	**Հայտ 1**	**Հայտ 2**	**Հայտ 3**
Ընդհանուր գինը		Տեխնիկական գնահատման արդյունքում հայտը մերժվել է	ՀՀԴ 10 000 000	ՀՀԴ 10 200 000
Ֆինանսական միավոր = (նվազագույն գնային առաջարկ/դիտարկվող հայտի գնային առաջարկ x 100)			100	10 000 000 /10 200 000 x100 =98.04

4. **Գնահատող հանձնաժողովի եզրահանգումները.**

Փողի համար լավագույն արժեքը սահմանվում է տեխնիկական որակը գնի նկատմամբ կշռելով 80/20 հարաբերությամբ: Դա արվում է բազմապատկելով.

- հայտի տեխնիկական առաջարկներին շնորհված միավորները 0,80-ով,

- հայտի գնային առաջարկներին շնորհված միավորները 0,20-ով:

Մրցույթի համապարփակ գնահատման ամփոփագրի նմուշ

	Առավելագույն հնարավոր միավորը	**Հայտ 1**	**Հայտ 2**	**Հայտ 3**
Կշռված տեխնիկական միավոր x 0.80		Տեխնիկական գնահատման արդյունքում հայտը մերժվել է	99.22 x 0.80 = 79.38	100.00 x 0.80 = 80.00
Ֆինանսական միավոր x 0.20			100.00 x 0.20= 20.00	98.04 x 0.20= 19.61
Ընդհանուր միավոր			79.38 + 20.00= 99.38	80.00 + 19.61= 99.61
Վերջնական վարկանիշ			**2**	**1**

Ստացված, կշռված, տեխնիկական և ֆինանսական միավորներն այնուհետև գումարվում են իրար՝ որոշելու համար ամենաբարձր միավոր ստացած հայտը, այսինքն՝ լավագույն որակ-գին հարաբերակցությունը: Անհրաժեշտ է հաշվարկները կատարել խստորեն վերը նշված հրահանգներին համապատասխան:

Գնման մրցույթի գնահատումը կիրականացնի «Իրավաբանների հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպության նախագահի կողմից ստեղծած Հայտատուի որակավորումը, այդ թվում նմանատիպ ծառայությունների մատուցման նախկին փորձառությունը (առնվազն 5 տարվա փորձառություն) և նմանատիպ աշխատանքների կատարման առնվազն 1 օրինակ ծառայության գնման մրցույթի մրցութային հանձնաժողովը՝ 3 հոգու կազմով: Մրցույթի հաղթող կճանաչվի և մրցութային հանձնաժողովի առաջարկությամբ գնահատման ծառայությունների պայմանագիրը կստորագրվի այն անձի հետ, որի ներկայացրած հայտը կստանա հանրագումարային ամենաբարձր ընդհանուր միավորը՝ պայմանով, որ մրցույթի մասնակցի կողմից բացառման և ընտրության չափանիշների համար ներկայացված փաստաթղթային ապացույցները ստուգված և ընդունելի են:

Մրցույթի հայտերը բացելուց և հայտերը գնահատելուց հետո գնման մրցութային հանձնաժողովը կազմվում է արձանագրություն, որը ստորագրում են Հանձնաժողովի նիստին ներկա անդամները:
Արձանագրությունը պարունակում է՝

- պատվիրատուի անվանումը, գտնվելու վայրը.
- գնման նպատակը և գնման առարկայի բնութագրերի համառոտ նկարագիրը,
- մասնակիցներին ներկայացված փաստաթղթերի պատճենները.
- տեղեկատվություն՝ մրցույթի հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին (եթե առկա է).
- տեղեկություն՝ հայտերի բացման վայրի, օրվա և ժամի վերաբերյալ.

- հայտերը ներկայացրած մասնակիցների անվանումները և գտնվելու հասցեները.
- տվյալներ՝ բացված յուրաքանչյուր ծրարում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության մասին.
- տվյալներ՝ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին.
- յուրաքանչյուր մասնակցի առաջարկած տեխնիկական և գնային առաջարկները.
- մրցույթը չկայացած հայտարարելու դեպքում՝ դրա հիմնավորումը.
- գնահատման բոլոր փուլերի գնահատման հակիրճ նկարագրությունն ու արդյունքները,
- հաղթող մասնակցի անուն, ազգանունը կամ անվանումը՝ իրավաբանական անձի և ԱՁ-ի դեպքում,
- պահեստային թեկնածուի անուն, ազգանունը կամ անվանումը՝ իրավաբանական անձի և ԱՁ-ի դեպքում,
- նիստին ներկա հանձնաժողովի անդամների անունները և ազգանունները:

Ուշադրություն

Ներկայացված պահանջներին չհամապատասխանող, հայտերի ներկայացման կարգի խախտմամբ փաստաթղթեր ներկայացրած, այդ թվում սահմանված ժամկետից ուշ հայտեր ներկայացրած անձանց, ինչպես նաև ԵՄ սանկցիոն ցանկում ընդգրկված անձանց հայտերը չեն դիտարկվի:

Սույն գնման մրցույթի համար «Ծագման կանոնի (Rule of origin) պահպանման սկզբունքը կիրառել չէ, իսկ ազգության կանոնի պահպանման սկզբունքը (rule of nationality) գործում է: Սույն գնման մրցույթի մրցույթի հայտարարությամբ և տեխնիկական առաջադրանքով բոլոր չկարգավորված հարցերի դեպքում գնման մրցութային հանձնաժողովը առաջնորդվում է ԵՄ ՊՌԱԳ կարգավորումներով (EU PRAG regulations):